ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-21-10/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «02» մարտի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Հայրապետյանի, ով գործում է «ԷԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **02.02.2021թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-21-10/1-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանասական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ., CPV՝ 50751100/502), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան Ծառայություն՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **6,237,000 (վեց միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

2.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո, մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ՝ 02.02.2021թ.-ից: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցած Ծառայության դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառած լինելու դեպքում:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված ծառայությունների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԼ ՍԹԱՐ» ՍՊԸ
ք. Երևան, Բարեկամության 5	ք.Երևան Մառի փ. 9-րդ 2. բն. 11
ՀՀ ՊՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570064362920100
ՀՎՀՀ 02528157	ՎՀՀ 00933573
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ս.ՍԱՀԱԿՅԱՆ	Հ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-10/1-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ծառայության Մատուցման ժամկետը										
					1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
					Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.
1	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	6,237,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000	567,000

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-10/1-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV կոդ	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	50751100/502	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	1,134,000	2,835,000	4,536,000	6,237,000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի տնօրեն

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ